## ՀՀ Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանի շնորհավորական ուղերձը Հաղթանակի և խաղաղության տոնի առթիվ

Հայրենական պատերազմի և Արցախյան ազատամարտի հարգելի՛ վետերաններ,

Սիրելի՛ հայրենակիցներ,

Ջերմորեն շնորհավորում եմ ձեզ Հաղթանակի և խաղաղության տոնի առթիվ: Մայիսյան հաղթանակները ձեռք են բերվել մեր քաջազուն հերոսների անձնվիրության ու սխրանքի, բազմաթիվ զրկանքների ու դժվարությունների դիմակայելու և կյանքի գնով: Այս հաղթանակների հերոսական էջերում ամփոփվել ու իրենց խտացված արտահայտությունն է ստացել մեր ժողովրդի ազատատենչ և անկոտրում ոգին: Հայրենական մեծ պատերազմի տարիներին մեր պապերի ու հայրերի սխրագործության շնորհիվ է նաև, որ ֆաշիզմի ճիրաններից փրկվեց համայն մարդկությունը:

Մեր տոնացույցում Մայիսի 9-ը նորովի իմաստավորվեց 1992 թվականին՝ Շուշիի ազատագրմամբ՝ դառնալով ոչ միայն արցախյան ազատամարտի, այլև աշխարհասփյուռ հայության վճռականության ու միակամության խորհրդանիշ: Այդ միասնական կամքն ուղղված էր իր տունն ու հայրենիքը, խաղաղ ապրելու և արարելու իր իրավունքը պաշտպանելուն: Եվ այդ պաշտպանության համար իրենց կյանքը նվիրաբերած հայ քաջորդիներին ես իմ խոնարհումն եմ բերում:

Ու այսօր էլ պատվախնդրորեն շարունակելով իրենց հայրերի գործը՝ մեր քաջասիրտ զինվորները, վստահ եմ՝ մայիսյան հաղթական տոները համալրելու են ևս մեկով՝ այս անգամ աներկբա ու վերջնական:

Այս համոզվածությամբ ու լավատեսությամբ էլ ցանկանում եմ ջերմորեն շնորհավորել Հայրենական մեծ պատերազմի և Արցախյան ազատամարտի վետերաններին, նրանց ընտանիքներին ու մեր զինվորներին, մաղթել հարատև խաղաղություն և բարօրություն:

**ՀՀ Սյունիքի մարզպետ**  **Ս. Խաչատրյան**

06 մայիսի 2016թ.